



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2915

*Panicum uliginosum*

*Panicum uliginosum*

391.995  
P-95

*Panicum*  
1910



# 2003



# 2003



5387

Յ. Բուճաճեան.

ԽՕՍՈՂ

ԶՈՒԿԸ



ՆԿԱՐԵՅ Գ. ԵՐԻՑԵԱՆ.

1510թ.



# ԻՍՍՈՂ ԶՈՒԿԸ

1.

Լինում է շի լինում մի աղքատ մարդ:  
Էս աղքատ մարդը գնում է դառնում մի  
ձկնորսի շալակատար: Օրական մի քանի  
ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով  
ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն  
է բռնում, տալիս իր շալակատարին, որ պահի,  
ինքն էլ ետ շուրն է մտնում: Էս շալակ-  
տարը գետափին նստած՝ նայում է նայում  
էն սիրուն ձկանն ու միտք է անում:

—Տէր Աստուած, ասում է, սա էլ, որ  
մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՛ սա  
էլ մեզ նման ընող ունի, ընկեր ունի, աշ-

խարհքից բան է հասկանում, ուրախութիւ-  
կամ ցաւ է գրում՝ թէ չէ...

Հէնց էս մտածելու ժամանակ ձուկ  
լեզու է առնում:

—Լսի, ասում է, մարդ-ախպէր: Ըն-  
կերներիս հետ ես խաղում էի գետի ալի-  
ների մէջ: Ուրախութիւնից ինձ մոռացա  
ու անզգուշ ընկայ ձկնորսի ուռկանը: Հիմ,  
ով գիտի, իմ ծնողը ինձ որոնում է ու յ  
է լինում, հիմի ընկերներս տխրել են:  
էլ, տեսնում ես, ինչպէս եմ ստանջու-  
շունչս կտրում է ջրից դուրս: Ուզում  
էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նր  
հետ էն պաղ ու պարզ ջրերում: Էնպէս  
ուզում, էնպէս եմ ուզում... Եկ խեղճ ա

9 6952-57





ազատ արա ինձ, բայց թող, բայց թող գնամ...

Էսպէս էր ասում ցած, շատ ցած ձէնով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով:

Էս շալակտարի մեղքը գալիս է, առնում է ետ գցում գետը:

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չը լինի քու ծնողը: Թող չը տխրեն քու ընկերները: Գնա ապրի ու խաղ արանրանց հետ:

Չկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա:

— Տօ ախմախ, ասում է, ես էստեղ ջրի մէջ թըջւելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլ ետ ջուրը գցում... Դէ գնա կորի, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակտարը չես էս օրից. գնա սովից մեռի:

Չեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու գնում:


— Հիմի ես ո՛ւր գնամ, ի՛նչ անեմ, ո՞նց ապրեմ...—տարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը գէպի տուն:

2.

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դէմը դուրս է գալի մի մարդակերպ, Հրէշ առաջը մի գեղեցիկ կով:

— Բարի օր, ախպէրացու, էս ի՛նչ ես մոլորել, ի՛նչ ես միտք անում,— հարցնում է Հրէշը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը թէ ինչպէս հիմի մնացել է անզործ, անճալ





ու չի իմանում թէ ոնց պէտք է ապրեն ինքն ու իր կնիկը:

«Լսի, բարեկամ, ասում է Հրէշը: Էս կաթնատու կովը ես քեզ կը տամ երեք տարւան ժամանակով: Ամեն օր էնքան կաթը տայ, որ քու կնիկն ու դու կուշտ կուշտ ուտէք, ապրէք: Երեք տարին լրացաւ թէ չէ, հէնց էն գիշերը կը դամ ձեզ հարց կը տամ: Թէ հարցիս պատասխանեցիք—իմ կովը ձեզ լինի, թէ չէ երկուսդ էլ իմն էք, տանելու եմ, ինչ ուզեմ կանեմ: Համաձայն ես»:

—Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք, մտածում է աղքատը, կովը կտանեմ, էս երեք տարին կապրենք, մինչև երեք տարւայ լրանալն էլ Աստուած ողորմած է: Մի տեղից մի դուռը կը բացւի, կամ

գուցէ հէնց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

—Համաձայն եմ, ասում է ու կոյն առաջն անում, տանում տուն:

3.

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Ձեն էլ նկատում թէ ինչպէս անցաւ երեք տարին. և անհասանում է նշանակած օրը, որ Հրէշն էն գիշեր պիտի գայ:

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թէ ինչ պատասխան տան Հրէշին, կամ ով գիտի՝ ինչ կը հարցնի նա. ով կիմանայ Հրէշի միտքը:

—Այ թէ ինչ դուրս կը գայ, երբ մարդ բեշի հետ գործ բռնի... Հրէշի հետ հաշիւ չենայ... Հրէշից լաւութիւն ընդունի... —հառաչելով զղջում էին մարդ ու կին, այց անց կացածն անց էր կացել, էլ հնար ու կար: Իսկ զարհուրելի գիշերը արդէն րա էր հասնում:

Էս ժամանակ նրանց մօտենում է մի նծանօթ գեղեցիկ երիտասարդ:

—Բարի իրիկուն, ասում է, ճամփորդ արդ եմ. մութն ընկնում է, ես էլ յոգնած մ, հիւր չէք ընդունի ձեր տանն էս գիշեր:

—Ընչի չէ, ճամփորդ ախպէր, հիւրն ստծունն է: Բայց մեզ մօտ վտանգաւոր է ս գիշեր: Մենք Հրէշից մի կով ենք առել ու պայմանով, որ երեք տարի կթենք ու ենք, երեք տարուց ետը գայ մեզ հարց

տայ, թէ պատասխանենք, կովը մեզ լինի, թէ չէ—իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գայ, ու մենք էլ չը գիտենք թէ ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի մենք ենք մեղաւոր, վաթ թէ քեզ էլ վստաի:


—Բան չը կայ, որտեղ դուք՝ էստեղ էլ ես,—պատասխանում կ օտարականը:

Համաձայնում են հիւրը մնում է:

Մին էլ կէս գիշերին դուռը դրբրդում է: Ո՞վ է.—Հրէշը: Եկել եմ որ եկել եմ, գէ պատասխանս տւէք: Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնգայ լեզուն կապւում է մնում էն տեղները քարացած:

—Մի վախենաք, ես ձեր տեղակ սրս պատասխանը կը տամ, ասում է երիտասարդ հիւրը ու գնում է գէպի դուռը:





եկել եմ, զուսն ետևից ձայն է տալի

ես էլ եմ եկել, պատասխանում է  
հիւրը:

Ո՞րտեղից ես եկել:

Ծովի էն ափից:

Ընչո՞վ ես եկել:

Կաղ մոծակը թամբել եմ, վրէն նըս-  
, եկել:

Ուրեմն ծովը պատիկ է եղել:

Ի՞նչ պատիկ. արծիւը չի կարող մի  
միւսը թռչի:

Ուրեմն արծիւը ճուտ է եղել:

Ի՞նչ ճուտ. թևերի շաքը քաղաք է  
մ:

Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:

— Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծայ-  
րից միւսը չի հասնի:

— Ուրեմն նապաստակը ձագ է:

— Ի՞նչ ձագ. մորթին մի մարդու քուրք  
դուրս կը գայ, գլխարկն ու տրեխն էլ աւել:

— Ուրեմն մարդը թզուկ է:


— Ի՞նչ թզուկ, ծնկան ծէրին աքլորը  
ծուղրուղու կանչի ձէնը ալանջը չի հասնի:

— Ուրեմն խուլ է:

— Ի՞նչ խուլ. սարում որ պախրէն խոտ  
պոկի նա կը լսի:

Հրէշը մնում է կապած, մոլորած.  
զգում է, որ ներսը մի ուժ կայ իմաստուն,  
համարձակ, անյաղթելի, էլ չի իմանում ինչ  
ասի, սուս ու փուս քաշում կորչում է  
գիշերայ խաւարի մէջ:





Սրանք նոր մեռած տեղներիցը ետ են գալի, ուրախանում աշխարքովը մին են լինում: Հեան էլ բացում է բարի լուսը, և երիտասարդ հիւրը վեր է կենում, մնաքարով է ասում որ գնայ իր ճանապարհը: —Ձեռք թողնի, որ չենք թողնի, առաջը որում են մարդ ու կին. դու որ փրկեցիր էր կեանքը, ասա ինչով ետ վճարենք քո լաուլթիւնը...


—Ձէ, անկարելի բան է, պէտք է գնամ իմ ճանապարհը:

—Դէ գոնէ անունդ ասա, եթէ լաուլթիւնդ կորչի ու չը կարողանանք ետ վճարել, գոնէ իմանանք թէ ում ենք օրհնելու...

—Լաուլթիւնը արա ու թէկուզ ջուրը գցի—չի կորչի: Ես հէնց էն Սուտղ ձուկն եմ, որի կեանքը դու խնայեցիր... ասում է անձանօթն ու շքանում սպշած մարդու կնգայ աչքերից:







ԳԻՆՆ Է 15 ԿՈՎ



2915

0007400

20 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0007400



